

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆԻ ՎԵՊԵՐՆ ԻԲՐԵՎ ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ (Հայաստան)

բ. գ. թ., դրոշմապատկեր

Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ Վ. Պարտիզոնու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Բանալի բառեր – Ստեփան Ալաջաջյան, ցեղասպանություն, ազգային նկարագիր, «Չսպիացած վերք», հիշողություն, ազատություն, ճակատագիր, փաստագիտական նյութեր, ողբերգություն, ինքնակենսագրություն, ազդեցություն:

Key words: Stepan Alajajyan, genocide, national description, “Unhealed Wound”, memori, independence, fate, factual-scientific material, tragedy, autobiography, influence.

Ստեփան Ալաջաջյան. հայ գրականության յուրօրինակ դեմքերից մեկը, ում կենսագրությունն ու գրական անցած ճանապարհը մեր ազգային կյանքի խայտաբղետ մի խճանկար են հիշեցնում: Արմատներով՝ զեյթունցի, պանդուխտ հայի զավակ, ծնվել է Հալեպում, ներգաղթել Երեւան, վերջին հանգրվանը՝ Լոս Անջելես: Նա աշխարհով մեկ սփռված հայու բեկորներից մեկն է, ում ուղին նման է այն հազարավոր սփյուռքահայերի կյանքին, որոնք, իր իսկ պատկերավոր բնութագրմամբ, «օտար երկիր չտարան իրենց հայրենիքից ո՛չ ինչք, ո՛չ գանձ, ո՛չ ժառանգություն, ո՛չ իրավունք, ո՛չ էլ նույնիսկ քաղաքացիություն, այլ տարան հուշեր, ազգային սովորույթներ, օրորոցային երգեր, մի քանի մագաղաթ, բայց ամենից շատ տառապանք եւ հուշ»¹:

Պատանեկան տարիների վերհուշով Հայկաշեն Ուզունյանն այսպես է բնութագրում ընկերոջը. «Ընկերութեան մէջ քո հեզահամբոյր, զգայնութեամբ լեցուն յարաբերելու շնորհդ, բայց ազգային քաղաքական

¹ Ալաջաջյան Ստ., Հին արմատներ, նոր արմատներ // «Սովետական Հայաստան» ամսագիր, Եր., 1981, թիվ 2, էջ 24:

խլրտումներուն մէջ քու ըմբոստացող նկարագիրդ, որ հաւանաբար ժառանգած էիր առհասական կերպով քո նախահայրերուդ բնօրրանէն, քեզ դարձուցած էին մեր բոլորին սիրելի ու փնտռուած ընկերակիցը»²:

Ալաջաջանի համար բեկումնային էր 1953 թվականը: Լոյս տեսավ նրա «Անապատում» վեպը: «Այն միանգամից անհայտությունից գրական ասպարեզի վրա դրեց մի շնորհալի անուն»³, – գրել է Ս. Սարինյանը: Բոլորովին նոր թեմա, մարդկային բնավորության նոր աշխարհ, թարմ, ինքնատիպ գրելաձեւ եւ ոճ: Ալաջաջանը շարունակեց հայ արձակի դասական ավանդները, հայրենի գրականություն բերեց նոր շունչ ու ոգի՝ ազգային եւ եվրոպական բարձր արժեքների համադրությամբ: Չուշացան նաեւ գրողների, գրականագետների արձագանքները:

Իրար էին հաջորդում նրա Հայաստան հայրենիքով շաղախված, եղեռնի չսպիացած վերքերով թաթախված, հայի անորոշ ապագայով, պատմական-քաղաքական, գոյապայքարի, անձնական կյանքի ողբերգական էջերի բացահայտմամբ, ներգաղթի թեմաներով գեղարվեստական երկերը. «Անապատում», «Պարտություն», «Եղեգները չխոնարհվեցին», «Փյունիկ», «Առանց հայրենիքի», «Վիրավոր եղջերուն», «Անառագաստ նավակներ», «Ապառաժներն արտասվել գիտեն», «Չսպիացած վերք», որոնք ճանաչում բերեցին հեղինակին հայրենիքում եւ Սփյուռքում: Այս հարցադրումները տեղ գտան նաեւ տարբեր առիթներով կարդացած ելույթներում, հոդվածներում:

Համաժողովրդական չսպիացող վերքը ժայթքեց եւ դարձավ մի հրաշալի գեղարվեստական երկ, որն իր ծնունդով հաստատեց՝ «եղեգները չեն խոնարհվում»: Ալաջաջանի համար «Եղեգները չխոնարհվեցին» վեպը սոսկ գեղարվեստական երկ չէ. այն իր նախնիների՝ զեյթունցիների պատմությունն է՝ հիմնված իրական դեպքերի ու փաստերի վրա: Ծնողների կորցրած հայրենիքը, ականատեսների հիշողությունները, կարոտը, ժողովրդի անընկճելի կամքը արտացոլվեցին վեպում (1966-1967): Վեպը Չեյթունի վերջին հերոսամարտի գեղարվեստական տարեգրությունն է, որն իսկապես նվաճում էր Ալաջաջ-

² «Ալաջաջեան Ստեփան-70» / մատեն յարգանքի եւ գնահատանքի // Թեքեան Մշակութային Միութիւն, Լոս Անջելըսի մասնաճիւղ, 1995, էջ 25:

³ Սարինյան Ս., Ալաջաջանի «Պարտություն» վեպը // «Սովետական Հայաստան», Եր., 14 հունիսի, 1958:

յանի գրական ճանապարհին: «Այլեւս չկայ պատմական Ջէյթունը, որ այժմ կոչւում է Սուլէյմանիէ եւ կան այնտեղ աւերակներ ու մի քանի տուն, որքան ցաւալի է... Մեր կեանքը եղել է ազատամարտ կամ հերոսամարտ, որի փայլուն օրինակը Ջէյթունն է, նրա կենսագրութիւնը»⁴: Վեպն իր վրա կրում է արձակագրի հասունության ու վարպետության դրոշմը, ակնառու տաղանդը, գրական անհատականության դիմագիծը: Վեպում եղեռնից փրկված բեկոր-հերոսները վերադարձան Կիլիկիա՝ հայկական ինքնավար պետականություն ստեղծելու ակնկալիքով, ու խաբվեցին եվրոպական դիվանագիտությունից, ապա 1921 թվականին հերոսական կռիվ մղելով թուրքերի դեմ՝ ապաստան գտան Մերձավոր Արեւելքի հյուրընկալ ժողովուրդների մոտ:

Ալաջաջյանն իբրեւ պատմության տարեգիր արձանագրում է փաստը, որից հետո ներկայացնում այն շիկացած մթնոլորտը, որը պետք է կանխորոշեր զեյթունցիների հետագա ճակատագիրը: Սա գրողից պահանջում էր կյանքի փորձ, ժողովրդի բնավորության խոր ընկալումներ, նրա պատմության, ազգագրության իմացություն: Այս ամենն արձակագիրը կարողացավ իրականացնել փաստական նյութի, կենսական տպավորությունների ու ժողովրդական երեք կերպարների՝ Փառենի, Արամի, Կարոյի կատարյալ մարմնավորումներով, նրանց տարբեր տեսակետների յուրօրինակ մեկնաբանություններով, բայց բոլորին միավորող զորեղ հայրենասիրությամբ: Տարագիր ժողովուրդը, կրկին վերադառնալով մոխրակույտի վերածված իր բնակավայրը, ուզում է վերագտնել իրեն:

Այս երեք կերպարների մտածելակերպում ճշմարիտ խոսք կա, բայց ժողովուրդը ինքն է իր բախտի տերը, եւ որոշումը նրանն է՝ ում հետեւի: Հեղինակը, քիչ է ասել, թե ապրում է զեյթունցիների ճակատագրով: Վիպասանի գրչի ներքո հառնում են զեյթունցի վրիժառուների հերոսական կերպարները՝ իրենց ողջ հմայքով, ինքնատիպ խառնվածքով, հայրենի հողը պաշտպանելու վճռականությամբ: Փառենը ինքն էլ քայլող պատմություն է, որի մեջ ժողովրդի իմաստությունն է ամփոփված.

⁴ Ալաջաջեան Ստ., Հայ մամուլի էջերում (1957-2005), Քալիֆորնիա, 2008, էջ 125:

«Դավաճան է նա, ով հային խրատում է անզեն մնալ...»⁵: Արամն այլ համոզման է. նա գտնում է, որ այլեւս չի կրկնվի սպանողը, եւ պետք է մտածել ոչ թե զենքի, այլ հողի մշակման, ավերակների վերացման մասին: Կարոյի կարծիքով, ավերված երկրում հայի համար գերխնդիրը վրեժն է. «Վրեժը սրբազան է, կոհիվ է պետք, զենքը հայի բարձր պիտի լինի, փոքր ժողովրդի բարձր»⁶: Երեքն էլ յուրովի ճիշտ են, բայց արձակագիրը Փառենի հետ է կապում իր հույսերը. նա հեռատես է, ավելի սթափ է նայում իրադարձությունների զարգացմանը. «Սրբազան ու հերոսական կոհիվ մղեցին Վասպուրականն ու Ֆնդիճաքը, Մուսա լեռը, Ուրֆան ու Շապին Գարահիսարը, իսկ այն վայրերում, ուր զենք չկար ու մարդիկ պատրաստ չէին, թշնամին շատ հեշտությամբ ու ավելի վայրագորեն դատաստան տեսավ: Ձենք գնիր, Արամ, զինիր ժողովրդին, – հորդորում է նա:

Կարոն եւ վրիժառու է, եւ ինքնամոռաց սիրում է շարականներ երգել: Նրա մեջ նաեւ հողին, ցանքին, հատիկների սքանչելի բույրին կարոտած մարդն է խոսում. «Ամբողջ հարթավայրը կցանեն, բուռ առ բուռ կնետեն ցորենը եւ կհամբուրեն...»⁷:

Արձակագիրը Փառենի կերպարում խտացնում է ժողովրդի մի ամբողջ հատվածի հավաքական բնավորությունը: Փառենը դառնում է հավատարմատար, ուղեւորվում Ադանա՝ Կիլիկիայի ընդհանուր վիճակը պարզելու, զեյթունցիների հետագա անելիքները որոշելու համար: Գրական այս հնարանքով Ալաջաջյանը պատկերում է Ջեյթունի, Մարաշի, Ադանայի, ողջ Կիլիկիայի ողբերգությունը:

Վեպում հեղինակը ներկայացրել է կերպարների մի ողջ պատկերասրահ, նրանցից յուրաքանչյուրին բնութագրել ինքնատիպ մականուններով՝ Բու Մանուկ, Ժանգ Սեդրակ, Ծերունի Թումաս, Անհոգ Տրդատ, որոնք հերոսին ուղեկցում են ծննդից մինչեւ մահ: Այս կերպարներից ամեն մեկը հանդես է գալիս յուրօրինակ հայրենասիրությամբ: Ծերունի Թումասը զենքեր է կռում, նոենու շիվեր ու լրիկի սա-

⁵ **Նույնը**, Եղեգները չխոնարհվեցին, Եր., «Սովետական գրող», 1984, էջ 366:

⁶ **Նույն տեղում**, էջ 77:

⁷ **Նույն տեղում**, էջ 212:

ծիլներ տնկում՝ ձուլված հողին, նրանից անբաժան, չիմանալով, որ «մոխրացել է Ձեյթունի վերջին մասնիկը, եւ ինքը վերջին զեյթունցին է, որ մնացել է հարազատ ու օտարացած հողում»: Անհոգ Տրդատն էլ նախընտրում է կռիվը. «Նորածին տղայիս չեմ տեսել, երդվում եմ, որ չեմ նայելու նրա երեսին մինչեւ...»⁸:

Յուրաքանչյուր զեյթունցու նշանաբանն է՝ «Ձեյթունցին կմեռնի, բայց չի կարող հանդուրժել բռնությունը, զեյթունցի առյուծները լալ չգիտեն, մոնչալ գիտեն»⁹:

Ազատագրական պայքարի թեման դարձնելով վեպի առաջը՝ գրողը ծավալային ընդգրկումներով ստեղծում է մի հոյակապ ասք-պատում, որը հարազատ եզրեր ունի Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» ստեղծագործության հետ:

Ալաջաջանի գրական անդաստանում իր մնայուն տեղն ունի «Չսպիացած վերքը»: Խորհրդանշական անվանումը պատահական չի ընտրվել: Այդ վերքը բույն դրեց պատանու սրտում, երբ զեյթունյան ազատագրական կռիվներում մարտնչած վերջին բեկորներից մեկի՝ հոր հետ 1939 թ. եղավ Դեր Ջորում¹⁰: Այդ ուղեորությունը տակն ու վրա արեց ներաշխարհը: Տասնամյակներ հետո նա նորից այցելեց Եփրատի ափին գտնվող այդ դժոխքը: Մռայլ տպավորությունները, ցավը, հոգու խռովքը դարձան հուզախառն պատմվածքներ եւ վեպեր, վիպակներ ու հրապարակախոսական հոդվածներ՝ նախապատրաստելով «Չսպիացած վերք»-ի ծնունդը: Վեպի սկիզբը մեկ անգամ եւս հաստատում է այն միտքը, որ ինքը հարազատ զավակն է իր ժողովրդի: «Մի՛ այպանեք ինձ, որ մերթ ընդ մերթ ուժեղ զգացմունքների միջամտությունը գերադասելի եմ համարել, քան հանդարտ շարադրանքը, գեղարվեստական պատումը: Դրանք առաջացել են դարեր շարունակ իմ ժողովրդի անիրավված լինելու զգացմունքից: Այդ անիրավված ժողովրդի զավակն եմ ես, եւ այդ զավակի պարտքի հատուցումն է այս վեպը»¹¹:

⁸ **Նույն տեղում**, էջ 68:

⁹ **Նույն տեղում**, էջ 288:

¹⁰ **Քէշիշեան Օ.**, Ստ. Ալաջաջան, Վաստակաւոր եւ արգասաբեր գրագէտը, Լոս Անճեյըս, 2009, էջ 17:

¹¹ **Ալաջաջան Ստ.**, Չսպիացած վերք, հ. 1, Եր., «Լուսակն», 2019, էջ 47:

Ալաջաջյանի համար «Չսպիացած վերքը» իր հոգու պատմությունն է, իր ժողովրդի, տոհմի պատմությունը, որ տարիներ շարունակ հյուսել է իր մտքում եւ թղթին հանձնել եւ ամփոփել երեք հատորներում՝ «Օծապտույտ երկաթուղին», «Հովիտներս ամայացան», «Անտառների անձրեահարսը»: Վեպի նյութը բազմաբովանդակ ու խորը ընդգրկում ունի, այն ներառում է 1912-1915 թվականներին կատարված դեպքերն ու իրադարձությունները: Այն ազգային, պատմա-քաղաքական հարցեր շոշափող գեղարվեստական երկ է, որը գրելիս հեղինակն օգտագործել է փաստականագրական պատահիկներ, ականատեսների վկայություններ, ֆրանսիական, թուրքական, անգլիական եւ ռուսական պատմական փաստաթղթեր, որոնք բացահայտում են դառը իրականությունը: Ալաջաջյանի վկայությամբ՝ «Չսպիացած վերքը» գրելու մտահղացման շարժառիթները եղել են Հալեպի Սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցու արխիվում իր մեծ հոր ու նրա եղբայրների՝ Հալեպի հոգեւոր առաջնորդին ուղղված օգնության գիրը հայտնաբերելը, ապա հայ գրողների ու մտավորականների հետ իր՝ Ստամբուլ այցելության ժամանակ Բալկանյան ու Համաշխարհային առաջին պատերազմների տարիների մի քանի թուրքական արաբատառ թերթերի նյութերին ծանոթանալը. «Իմ նոր վեպի՝ «Չսպիացած վերքի» մտահղացումն այդ օրն էր, առիթը այդ փոքրիկ, մատիտով գրված նամակն ու Վոսփորի ափի այս տեսարանը»¹²: Չնայած որ ամենեւին էլ զարմանալի չէր այս թեմային անդրադարձը, ազգային հիմնախնդիրների նկատմամբ նրա հետեւողական «չխոնարհվող եղեգների» կեցվածքով մոտեցումը միշտ էլ առանձնացել է կենսունակությամբ ու ճշմարտացիությամբ: Վեպը ներկայանում է ժամանակի իրադարձությունների՝ հատկապես մեծ տերությունների քաղաքական դավադրությունների եւ դիվանագիտական խարդավանքների, թուրքական բռնակալության ստոր էության, արեւմտահայ իրականության ճշգրիտ ներկայացմամբ ու մեկնաբանմամբ:

Դժվարին գործ է ստանձնել հեղինակը, գրել եղեռնի, քսոորի մասին, ասել է թե՛ նորից վերապրել այդ ամենը: Ալաջաջյանի վեպի ատաղձը իրական-պատմական է՝ Բեռլին-Բոսֆոր-Բաղդադ երկաթու-

¹² **Նոյնը**, Հայ մամուլի էջերում, էջ 269:

ղու կառուցումը, բայց զուգահեռ հեղինակի նպատակն է ներկայացնել Առաջին համաշխարհային պատերազմի, Թուրքիայի մայրաքաղաքում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների, ինչպես նաև Կիլիկիայի հայաբնակ մի փոքրիկ գյուղի՝ Ֆնդիճաքի ազատամարտի արտացոլումը, երիտթուրքերի պարագլուխների հայատյաց քաղաքականությունն ու ցեղասպանությունն իրականացրած Թալեթի, Էնվերի, Ջեմալի ու նրանց համախոհների կերպարների բացահայտումը: Հեղինակը հստակ ներկայացնում է, որ կառուցվելիք երկաթուղու անվան տակ շատ պետություններ շահադիտական նպատակներ են հետապնդել: Այս ամենի ինքնատիպ անդրադարձն են հեղինակի մտորումները. «Հայրս կիլիկիացի էր, եւ իմ ծննդավայրը պետք է լիներ Կիլիկիան: Ես ծնվել եմ Հալեպում: Իմ եւ հորս ծննդավայրերի տարբերության պատճառը եղել է աշխարհը վերաբաժանող ահավոր մի պատերազմ, որ մղել են հզոր պետությունները, բայց պատերազմից ամենից շատ տուժել է դարերի ճամփորդ, կենսունակ եւ փոքրաթիվ մի ժողովուրդ: Հայրս այդ ժողովրդի զավակն էր, իսկ ես՝ հորս: Այս վեպը համաշխարհային այդ պատերազմի, իմ ժողովրդի, հորս եւ իմ պատմության կենսապատկերի մի մասն է»¹³: Արձակագիրը պատմական դեպքերի, քաղաքական համոզմունքների միջոցով ցույց է տալիս, որ Թուրքիան, օգտվելով ստեղծված իրավիճակից, հնարավորություն ստացավ նոր թափով իրականացնել իր դավադիր քաղաքականությունը՝ ոչ միայն սահմանափակել ու ոտնահարել թուրքական կայսրության մեջ ապրող արեւմտահայության իրավունքները, այլեւ իրականացնել «Թուրքիան՝ թուրքերին» եւ առաջին հերթին՝ «Թուրքիան՝ առանց հայերի» վաղուց փայփայած մարդատյաց ու ազգատյաց քաղաքականությունը:

Թուրքերին բացահայտ աջակցում էր Գերմանիան, քողարկված ձեւերով նպաստում էին ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի ու Ֆրանսիայի պետական շրջանակները: Եվրոպական տերությունները արեւմտահայության հանդեպ իրականացվող թուրքական ոճրագործությունների նկատմամբ Ալաջաջյանի գունեղ արտահայտությամբ՝ «արձանիկների կեցվածք» էին ընդունել, արձանիկներ, որոնցից մեկի անունը Անգլիա էր, մյուսինը՝ Ֆրանսիա: Ինչպես գրում

¹³ **Նույնը**, Չսպիացած վերք, հ. 1, էջ 4:

է վեպի հեղինակը, «...ձայն չլսող, բան չտեսնող, չզգացող, չմտածող անշարժ արձանիկներ»¹⁴: Հայկական կոտորածների այդ մշտական «հանդիսատես-դիտորդները» երբեմն էլ «միջամտել» են, բայց կոտորածների ավարտից հետո, միշտ լարել որոգայթներ: Թուրքերը լավ գիտեն, որ ոչ մի ազդեցիկ պետություն, նույնիսկ Ռուսաստանը, հայի պատճառով իրենց հետ չի պատերազմի: Ալաջաջյանը, քննելով դեպքերի հաջորդականությունը, կատարում է ճշգրիտ հետետություններ. Անգլիան Դարդանելում կռվում էր ոչ թե այն գրավելու, այլ ռուսներին Բոսֆորը գրավելու հնարավորությունից զրկելու համար: Իսկ Ֆրանսիան գրավված Կիլիկիան հետո պիտի Թուրքիային նվիրեր: 1914 թ. փետրվարի 8-ին ստորագրվեց «Բարենորոգումների օրենքը», որի համաձայն Եվրոպայից ուղարկված վերահսկիչ-կառավարիչները տասը տարով պիտի ընտրվեին հայաբնակ գավառների կառավարիչներ:

Արձակագիրը մանրամասնությամբ ներկայացնում է եղեռնին նախորդած տարբեր ժամանակահատվածներում թուրքերի ծրագիրը. «Ով թուրքի հավատք չունի, թուրքի արյուն չունի, չունի նրա լեզուն՝ չպետք է ապրի «այս հողի վրա: Մեզ պետք են այնպիսի քաղաքացիներ, որոնք ուզում են մնալ թուրք, ապրել եւ աշխատել որպես թուրք: Սա ալլահի պատգամն է»¹⁵: «Օրենքով» ամրագրված, քողարկված «փոխադրել այլուր» անվան տակ նրանք իրականացրին իրենց հրեշավոր ծրագիրը, անմարդկային չարչարանքներով սպանվեց, հոշոտվեց ու իր բնօրրանից արտաքսվեց մի ողջ ժողովուրդ: Ալաջաջյանը, կորստի ցավն ու զգացումները հոգում խեղդելով, ներկայացնում է եղերական մղձավանջը: Իրավացի է նրա նկատառումը, որ Թուրքիան միշտ նույն Թուրքիան է թե՛ իր պահվածքով, թե՛ վարած քաղաքականությամբ: Հեղինակն իրար է հակադրում պետական այրերի՝ վարչապետ Մահմուդ Շեքթեֆ փաշայի եւ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի իրարամերժ, այնքան տարբեր ցանկությունները. «Մեջքիդ զորք ու դրամ ունենաս, սեփական քաղաքականություն վարես: Ուրիշ պետություններից պարտքով քաղաքականություն չմուրաս, ոչ էլ՝ փոխառություն»¹⁶:

¹⁴ **Նույնը**, Չսպիացած վերք, հ. 2, Եր., «Լուսակն», 2019, էջ 588:

¹⁵ **Նույնը**, Չսպիացած վերք, հ. 1, էջ 431:

¹⁶ **Նույն տեղում**, էջ 221:

«Մի պատահող ունենաս, որ քոնը լինի, մեջքին լեռ ու բլուր ունենա: Ներքեւում ձոր լինի, միջով գետակ անցնի: Իջնես ձորը, ջուր բերես դույլով, կժով, ջրես հողը՝ ակոս առ ակոս, միայն թե մի պատահ սեփական հող ունենաս»¹⁷:

Ալաջաջանը վեպում հաճախ է անդրադարձել հայկական տոնախմբություններին՝ դրանց հակադրելով թուրքերի գազանաբարո գործողությունները:

Վեպում օգտագործված պատմական վավերաթղթերից հիշատակենք 1914 թ. հոկտեմբերի 13-ին հայտարարված ջիհադը. երկրում մուլեզնում էին հայերի հանդեպ ատելությունն ու քարոզը, որն ուղեկցվում էր հայերի զինաթափմամբ, հարկերի բարձրացմամբ, թերթերի փակմամբ, խրախուսվում էր հայասպանությունը՝ «Հայ սպանելը դրախտ գնալու ուղիղ ճանապարհ է» կարգախոսով:

Մի այլ փաստաթուղթ վկայում է 1915 թ. մայիսի 20-ին ընդունված «ժամանակավոր օրենք»-ի մասին (խոսքը վերաբերում է թուրքական իշխանությունների կողմից հայերին իրենց բնակավայրերից տեղահանելուն), որի համաձայն՝ հանձնարարվում էր պատժել բոլոր ընդդիմացողներին:

Ալաջաջանը Մեռոնյանների գերդաստանի պատմության խորքի վրա ընդհանրացնում է երեւոյթը՝ հայերի զրկանքներն ու խոշտանգումները: Ֆնդիճաքի հերոսական ազատագրական պայքարը քննելով՝ հեղինակն այն համոզման է, որ արդար են ազատագրական կոիվները, որ մղեցին Ջեյթունը, Մուսալեռը, Ամանոսը, Ֆնդիճաքը, քանի որ որտեղ չկռվեցին, կրկնակի մահ ընդունեցին:

«Չսպիացած վերքը» գիրք է հայ ժողովրդի հանդեպ իրականացված նողկալի հանցագործության մասին, որն առ այսօր չի ստացել իր արժանի գնահատականը: Վեպը մեկ անգամ եւս հաստատում է արձակագրի ահազանգող խոսքը. հայը պիտի դասեր քաղի անցյալի սխալներից, իր լեզվի, մշակույթի, հոգեւոր արժեքների կողքին սիրի զենքը, պայքարի ու մաքառման մեջ տեսնի իր փրկությունը, հոյսը իր վրա դնի եւ ունենա դաշնակից բարեկամներ:

¹⁷ **Նույն տեղում**, էջ 220:

Ստեփան Ալաջայանի գրականությունը դեռ երկար ճանապարհ ունի դեպի ընթերցողը, իսկ դրա գաղտնիքը պետք է փնտրել գրողի տողերում. «Հոգուդ թելը քո հողի հետ պետք է լինի, սրտիդ թելը քո ժողովրդի, մտքիդ թելը ամբողջ աշխարհի»¹⁸:

SUMMARY

STEPAN ALAJAJYAN'S NOVELS AS EVIDENCE OF DOCUMENTARY MATERIAL

Armenuhi Muradyan

In this article is discussed the creative path of the famous writer, prose writer, translator Stepan Alajajyan. His works with its problems are actual today. Genocide has a special place in S. Alajajyan's prose. The writer's thoughts, memories, disappointments are reflected in these works.

¹⁸ **Նույնը**, Ոսկեգույն ծիրկաթին, «Սովետական գրող», Եր., 1981, էջ 130: